

ՔԱՂՈՒԱՅ ԿԱՆՈՆԱՅ

ԽԱԼԻՊԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ

Ա. Խալիպեան Ուսումնարանին աշակերտները երեք կարգ կբաժնուին .

ա) Լիաթոշակք .

բ) Կիսաթոշակք .

գ) Չբիավարժք :

Ամենքն ալ ուսումնարանին մէջ կբնակին , եւ միակերպ ք ամենուն սնունդը , հագուստը , եւ ամենայն պէտք եղած խնամքը :

Բ. Ամէն մէկ աշակերտին վճարելու տարեկան թոշակն է երկուհարիւր յիսուն (250) բուլլի արծաթ : Անկէց իզատ , աշակերտին ուսումնարան մտած ժամանակը ' միայն մէկ անգամ վճարուելու հանգերձագինն է յիսուն (50) բուլլի : — Ճանապարհի ծախքն ալ աշակերտաց վրայ է :

Գ. Երկու կամ երեք եղբարց մէկը , այսինքն երբոր երկու կամ երեք եղբարք մէկտեղ զրուցուին ուսումնարանին մէջ , մէկուն համար պիտի վճարուի 175 բուլլի , երկրորդին կամ երրորդին համար 250 : — Կիսաթոշակ աշակերտք ալ պարտական են վճարել հանգերձագինը , այսինքն 50 բուլլին :

Դ. Աշակերտաց թոշակին հատուցումը տարին երկու անգամ կլինի , այսինքն վեց ամիսէ վեց ամիս . թոշակին առաջին կէսը կվճարուի ' ճոցա ուսումնարան մտած ժամանակը , հետո ալ հանգերձագինը . եւ երկրորդ կէսը ' վեց ամսէն ետեւ :

Ե. Իւրաքանչիւր աշակերտ թէ Լիաթոշակ եւ թէ Կիսաթոշակ , պէտք է բերէ հետը իւր տնէն

12 շապիկ .

6 երեսորքիչ .

12 վարտիք .

6 սաւան .

12 թաշկինակ .

6 անձեռոց սեղանոյ .

12 զոյգ գուրպայ .

4 զոյգ կոշիկ :

Զ. Ուսումնարան մտնող աշակերտաց տարիքը 14-էն վեր եւ 8-էն վար պիտի չլինի :

Է. Խալիպեան ուսումնարանին մէջ վեց դասարան (flass) կայ եւ մէկ նախակրթարան մը , ուր կմտնեն այն նորեկ աշակերտներն որ առաջին դասարանը մտնելու համար պէտք եղած զլիստը ուսմունքները դեռ չեն սովորած :

Ը. Ուսումնարանին մէջ եղած ամէն ուսմունքներն ալ պարտական են սովրելու աշակերտները , իրենց կարողութեանը համեմատ : Միայն ուսերէն լեզուին ուսմունքէն ազատ մնալ ուզողները (այսինքն Տաճկաստանէն եկող աշակերտները) ազատ են նաեւ Ռուսաց պատմութիւնը , մատենագրութիւնը եւ օրէնսգիտութիւնը սովրելէն :

Թ. Ուսումնարանին մէջ դասախօսութիւնները առհասարակ հայերէն լեզուով կլինին. բայց Ռուսաց լեզուի, Ռուսաց պատմութեան եւ մատենագրութեան դասերը ռուսերէն կը տրուին, նմանապէս Գաղղիացոց լեզուի եւ մատենագրութեան դասերը՝ գաղղիարէն: — Բաց յայնմանէ բարձրագոյն ուսմանց մէկքանին առ այժմ գաղղիարէն, մէկքանին ալ ռուսերէն կրնան տրուիլ:

Ժ. Ուսման վերոյգրեալ նիւթերէն դուրս ինչ լեզու կամ գեղարուեստ որ ուզէ մէկը դաս առնուլ տալ իւր որդւոյն այս ուսումնարանիս մէջ, զոր օրինակ՝ յունարէն կամ լատիներէն կամ գերմաներէն, եւ երաժշտութիւն, կամ զինավարժութիւն, նոցա համար սահմանեալ առանձին վճարքը պիտի հատուցանէ:

ԺԱ. Տարեկան հանգստեան կամ պարապոյ միջոցը ամբողջ Յուլիս ամիսն է. եւ այն միջոցը կարող են աշակերտք իրենց տներն երթալ՝ եթէ ծնողք կամեան, եւ ճանապարհի ծախքը վճարեն:

ԺԲ. Մեծ մտադրութիւն եւ ջանք կայ որ աշակերտաց կերակուրը չափաւոր լինի եւ սննդաբար, ննջարանը մաքուր եւ օդահար, աշխատութիւնը զբօսանքով բարեխառնած, եւ ընդհանրապէս նոցա առողջութիւնը որչափ որ կարելի է խոհական չարքաշութեամբ ամբրցած:

ԺԳ. Ուսումնարանին բժիշկը ամէն օր անպակաս այցելութիւն կընէ հիւանդանոցին, ուր մասնաւոր Հիւանդապահ կայ:

ԺԴ. Աշակերտաց հագուստը երկու տեսակ է, երկուքն ալ միաձեւ ու միօրինակ. մէկը դուրսը հագնելու՝ կապտագոյն չուխայէ, Կայսերական հրամանաւ հաստատուած (*մունիշիր*), մէկը ներսը՝ ձմեռը սեւ չուխայէ, ամառը սեւ գունաւոր կտաւէ: — ձերմակեղէնները ամառը շաբաթը երկու անգամ կ'փոխուին, ձմեռը մէկ անգամ: Այս բաներուն եւ ընդհանրապէս տղայոց մաքրութեանը յատկապէս ուշ դնողը Հանդերձապետն է:

ԺԵ. Ուսումնարանին մէջ սաստիկ մտադրութիւն կլինի որ աշակերտք իրենց քրիստոնէական պարտքերը անպակաս եւ անպատճառ կատարեն. եւ կանոնապահ, հնազանդ, եղբայրասէր եւ քաղաքավար, համեստ եւ առաքինի լինելու ջանք ընեն:

ԺԶ. Աշակերտք ոչ երբեք միեակ կմնան, եւ ոչ միեակ քալելու կամ զբօսանքի կելեն, այլ միշտ վերակացու կգտնուի հետերնին. զիշերն ալ՝ բաց ի վերակացուէ՝ պահպան մը կ'սկիւ նընջարաններուն մէջ:

ԺԷ. Ամենայն աշակերտ պարտական է ամիսը մէկ անգամ նամակ գրելու իւր ծնողաց կամ ազգականաց:

